ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԼԱԴԻՄԻՐ ՌՈՒՇԱՅԼՈՅԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 3 փետրվարի 2000 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության ՆԳ նախարար Վլադիմիր Ռուշայլոյին՝ ՀՀ ՆԳ նախարար Հայկ Հարությունյանի և Հայաստանում ՌԴ դեսպան Անատոլի Դրյուկովի ընկերակցությամբ:

Ողջունելով հյուրերին, Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայ-ռուսական կապերի զարգացման առնչությամբ և հույս հայտնեց, որ ներքին գործերի նախարարությունների համագործակցությունը կնպաստի երկու երկրների կայունության ամրապնդմանը: «Երկրի օրինապահության պահպանման համար մենք տեսնում ենք նաև Եկեղեցու դերը, և մենք էլ մեր հերթին մեր նպաստը կբերենք այդ կարևոր գործին»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, պրն Ռուշայլոն իր հերթին կարևորեց Եկեղեցու անուրանալի դերը ժողովրդի հոգևոր-բարոյական դաստիարակության և դրանով իսկ օրինապահ հասարակություն կերտելու ճանապարհին:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ